ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հուլիսի 25-29-ը Իտալիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
Արման Խոջոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝
ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝
Իտալիայի Հանրապետություն, ք. Հռոմ, 2021թ. հուլիսի 25-29-ը

4. Հրավիրող կողմը՝
Միացյալ ազգերի կազմակերպության 2021 թվականի Պարենային համակարգերի գագաթնաժողովի քարտուղարություն

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Միացյալ ազգերի կազմակերպության 2021 թվականի Պարենային համակարգերի նախագագաթնաժողովին

6. Քննարկված թեմաները՝

Փորձի փոխանակման, փաստերի վերլուծության և հավաքական ջանքերի գործադրման շնորհիվ մշակել պարենային անվտանգության համապարփակ և ընդհանրական ռազմավարություն՝ դիմակայելու այնպիսի գլոբալ մարտահրավերներին, որոնց թվում են՝ կլիմայի փոփոխությունը, անհավասարության աճը, թերսնումն ու սննդային անվտանգությանն առնչվող մի շարք այլ խնդիրներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- ՄԱԿ-ի 2021 թվականի Պարենային համակարգերի գագաթնաժողովի շրջանակներում, նախքան նախագագաթնաժողովը, Հայաստանում երկու

աշխատաժողովի անցկացում՝ Հայաստանի գագաթնաժողովի ազգային ղեկավար, Էկոնոմիկայի փոխնախարար Արման Խոջոյանի գլխավորությամբ:

Առաջին աշխատաժողովի ընթացքում տեղի ունեցած քննարկումները նվիրված էին ագրոպարենային արտադրանքի մատակարարման շղթաների դիմացկունությանն և սննդամթերքի անվտանգությանն առնչվող խնդիրներին:

Երկրորդ աշխատաժողովը նվիրված էր անվտանգ սննդի առկայություն ապահովմանը, արդյունավետ հողային ռեֆորմի համար առաջարկվող գործողությունների պլանին, գյուղատնտեսության ոլորտում կրթության և հետազոտության վերափոխմանը, ինչպես նաև հանրային և մասնավոր գործընկերության ամրապնդմանը՝ պարենային համակարգերի վերափոխման և արտահանման խթանման նպատակով:

- Հուլիսի 26-28-ը Հռոմում անցկացվող նախագագաթնաժողովը, որն իր հարկի տակ էր համախմբել աշխարհի ավելի քան 140 երկրների տարբեր դերակատարների, նպատակ էր հետապնդում առավելագույնս օգտագործել պարենային համակարգերի ներուժը՝ ժամանակակից մարտահրավերներին արձագանքելու և դիմակայելու տեսանկյունից:

Նախագագաթնաժողովի ընթացքում տեղի է ունեցել կլոր-սեղան քննարկում՝ նվիրված ազգային և տարածաշրջանային սննդի համակարգերի վերափոխման ուղիների ուսումնասիրմանը: Քննարկման ընթացքում՝ Ա. Խոջոյանը՝ որպես բանախոս, հանդես է եկել ելույթով՝ «Սննդի համակարգերի վերափոխում կայուն զարգացման նպատակներին հասնելու համար. դիմագրավելով մարտահրավերներին» խորագրով: Խոսելով պարենային անվտանգության ոլորտում առկա համընդհանուր մարտահրավերների և վերջիններիս դիմակայելու անհրաժեշտության մասին և վերլուծելով պարենային անվտանգության ոլորտում տարբեր երկրների առջև ծառացած համընդհանուր մարտահրավերները՝ նախարարի տեղակալը կարևորել է հավաքական ջանքերի գործադրման, ընդհանրական միջոցառումների կազմակերպման, փորձի փոխանակման և միասնական ռազմավարության ստեղծման անհրաժեշտությունը՝ խնդրի արմատական լուծման տեսանկյունից:

- Նախագագաթնաժողովի շրջանակներում Արման Խոջոյանը ունեցել է մի քանի այլ ելույթներ՝ ներկայացնելով Հայաստանի սննդի համակարգերի վերափոխման ճանապարհային քարտեզը: Խոսելով Հայաստանի գյուղատնտեսության ոլորտում առավել արդիական մարտահրավերների մասին՝ նախարարի տեղակալը ընդգծել է ջրային ռեսուրսների խնայողության նպատակով ոռոգման ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունը: Անդրադարձ է կատարվել գյուղատնտեսության բնագավառում տնտեսական աճի ապահովման հարցում

մարդկային կապիտալի, մասնագիտական գիտելիքների, որակյալ կրթության և երիտասարդների ներգրավման դերի կարևորությանը: Այս համատեքստում նախարարի տեղակալը կարևորել է վերափոխման ուղիների մշակման հնարավորությունները՝ Հայաստանում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Նախագագաթնաժողովի ընթացքում պարբերաբար անց կացվող առցանց հանդիպումների, հանրային ֆորումների ընթացքում բարձրացված խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր տարբերակները կամփոփվեն, իսկ անդամ երկրները կուսումնասիրեն ներկայացված լավագույն գաղափարների գործարկման հնարավորությունները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

03.08.2021թ.